ՏԱՐԱԶ

Գեղագիտական, Գրական, Հասարակական, Քննադատ. Քաղաքագիտական

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

Քառեներորդ տարի ՅՈՒՆՎԻԱՐ № 1—1916—XXVII

Հասցէն՝ Тифлис, Редакція «ТАРАЗ». Tiflis (Caucase), Direction «TARAZ»

Խմբագրութիւնը յօդուածները կրճատում է, ենթարկում փոփոխութեան և չտպածները (եթէ բերից պահած) չի վերադարձնում։

անձնական ակնակցութիւն խմբագրի հետ
ԵՐԵՔՇԱԲԹԻ և ԿԻՐԱԿՈՍ առ. ժ. 11—12։

Բաժանորդագրութիւն *ընդունւում է ամէն լեզուով* **Տարազի** *տարեկան տոզը առաջին երեսը 40 կոպ., վերջին 25 մանրատառ (պրետիտ)։ Արտասահմանից կրկնակի։ Շատ ա կրկնողներն առանձին համաձայնութեամբ։*

Ամսագիր-Տարազ *ամսական 3 կ.*

Տարազի նոր կայ № ը 2 ր.

Խմբագրութիւն—Թիֆլիս, *Գօլովինսկի պրօսպեկտ, տ. բաց է ամէն օր (բացի տօն և կիրակի օրերից) առ. 10 և կ մինչև 2-ը կէսօրից յետոյ։*

Голов. пр., 41 *Տելեֆօն 16*

ԲԱՑՒԱԾ Է 1916 ԹՒԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԻՔ

ԳԷՈՐԳ ՉՄՇԿԵԱՆ

ՀԱՅ ԹԱՏՐՈՆԻ ՀԻՄՆԱԴԻՐ

ԳԷՈՐԳ ՉՄՇԿԵԱՆ

Դեկտեմբերի 28-ին Պետրոգրադում վախճանեցաւ: Գրական-Գեղագիտական Սալոնը կը կատարէ պաշտամունք վետերան արուեստագէտի յիշատակին եւ ՏԱՐԱԶԻ հերթական №-ը կը նուիրէ նրան:

ՀՐՃՏԱՊ ՍՓՈՓԱՆՔ ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԱՑԻՆԵՐԻՆ

Ծննդեան Ձրագալոյսին հանդիսաւոր Թաթախումը, պատարագից յետոյ: Ջրօրհնէքին, չորեքշաբթի երեկոյեան 5 ժամին ոծնածաւ: Մուտքը ազատ ամենքի համար:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԿԱՐՆԵՐ.

Տէրունական ընտանիք.
Գէորգ Չմշկեան.
Վերածնած հայուհին.
Սգաւոր մայրը.
1915—Հայաստան.
Հայուհի.
Ամերիկահայ սանիտար. տաճկահայ փախստական և ռուսահայ մտաւորական. խմբանկ.
Հայոց Հայրիկ.
Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Գէորգ V կաթող. իր գրասենեակում.
Հայոց հեթանոսական պաշտամունք.
Հայրապետական Գահը Իջման ս. տաճարում.
Ղարաքիլիսի եկեղեցին ներսից.
Տաճկահայուհին ռուսահայ գիւղում.
Պետրոգրադի հայկ. կոմ. որբանոց.
Նապօլի. կամօրա.
Սեդրաք Մանդինեան.
Ի. Պ. Զայկովսկի.
Պրօֆ. Սողոմոն Եղիազարեան.
Ս. Էջմիածնայ ճեմարանում որբանոց.

ՆԻՒԹԵՐ.

Բացարձակ նամակներ . . . . . Տ. Նազարեան
Մայրը . . . . . Յարութիւն Պետրոսեան
Հայաստան . . . . . Բենիկ վարդապետ
Երիմեան Հայրիկի անտիպ նամակներից. Հայրիկ
Թիֆլիսը ամերիկեան աչերով . . . . . Anna Azgapetian
Ամենայն Հայոց Տաթողիկոսի օրը . . . . Ն. վ. Տէր-Աւետիսեան

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Յիսուսի պարտէզը. . . . . Երաժշ. Ի. Զայկովսկի
Մի երկու խօսք երաժշտութեան մասին . Սեդրաք Մանդինեան
Ղարիբի Նոր Տարին . . . . . Ս. Աճեմեան

ՆՈՐԱԳՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

XXVII-րդ ՏԱՐԱԶ

Տարազը ներկայ 1916 թ. թևակոխեց իր գոյութեան 27-րդ տարեշրջանը: Այդ ամբողջ իր կեանքում Տարազը և ոչ մի տարի չը կարողացաւ իր բաժանորդագնով ծածկել իր ծախսերը: Հեռու չը գնալու համար, առայժմըս այսքանս արձանագրենք, որ հէնց ռուսահայութեան կենդրոն Թիֆլիսը, այս անցած 1915 թ. Տարազին տուել է բաժանորդագին աւելի քիչ, քան մի ցրուիչի տարեկան ռոճիկ:

Հայնատարած Ռուսական կայսրութեան մէջ այս անցած 1915 թ. հայութիւնը Աղբիւրին մի րուբլի բաժանորդագնով չէ տուել նոյն իսկ 50 բաժանորդ:

Մենք փաստը դնում ենք հրապարակի վրայ, ընդգծելով, որ Աղբիւրը և Տարազը անցած 1915 թ. էլ լոյս են տեսել շատ կանոնաւոր և հայութեան մէջ չունին մրցակից:

Ներկայ 1916 թ. 34-րդ տարին թևակոխած Աղբիւրը և 27-րդը մտած Տարազը, անկախ ամեն տեսակ արտաքին և ներքին խոչընդոտներից կը հրատարակուեն բազմաբովանդակ և ճոխ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

ԱՂԲԻՒՐ և ՏԱՐԱԶԻ Նոր Տարւայ №№-ը ուղարկուում են միմիայն նրանց, որոնք վերանորոգել են արդէն 1916 թ. համար իրանց բաժանորդագրութիւնը:

Հայութեան բոլոր խաւերում հրաւիրուում են մեր աշխատակիցներն ու բաժանորդները տարածել

ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ:

Ծանօթ.—Աղբիւր-Տարազի տարեկան բաժնորդագինը արտասահման 40 շիլինգ կամ 50 ֆր. չէկ դրամը Լօնդոնում կամ Պարիզում ստանալու և ոչ Թիֆլիսում. (Չէկը ուղարկել Թիֆլիս):

ԹՄԲԱԳԻՐ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

Տիգրան Նազարեան

ՏԻԳՐԱՆ

RÉDACTEUR EN GHEF ET DIRECTEUR

Tigran Nazarian

ԹԻՓԼԻՍ № 1 ՅՈՒՆՒԱՐ XXVII—1916 Tiflis

ԲԱՑԱՐՁԱԿ ՆԱՄԱԿՆԵՐ

LIX

ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՎՀԱՏ ԾՈՑՍ

Երկարատև հայ երկունքը յորդ արիւնահոսութեան հետ անցած 1915 տարին չը կարողացաւ Մայր Հայաստանի կեանքի թելը կտրել։ Այո, ուժասպառ արաւ Նրա ատամները, մարմնի թելերը և շարունակում է դեռ Նրա երկունքը։ Սակայն այլևս դուրս է ամէն կասկածից, որ մօտալուտ Ծնունդը լինելու է բարեբեր, կենսունակ ու պայծառ։ Լի հաւատով, ուրիշն, պատրաստ լինենք պարզերես ողջունելու Մեծ Ծնունդը յոշոտած, բազմաչարչար մեր սուրբ Մայր Հայաստանի։ Եւ Նրա դեռ շարունակուող ծանր երկունքը նիհների դիակ-լուրների վրայ անսպառ ու անթառամ բուրաւէտ բիւր շուշան, յասմիկ ու վարդ։ Եւ Թող գեղատեսիլ ու անբիծ հայ նորածին Հրաստապ-Հրաձիգ-Աւետարոյս-Անահիտներ, արեան ու կրակի բովից շունչ առած մեր այս բողբոջ դիցուհիները, պճնազարդուն նոր տարազով և աւելր ու փլատակ ոտնակոխ մեր բուրաստանները, հանդ ու անդաստանները, աւաններն ու վաթանները իրանց պայծառ, տոկուն, լուսամիտ աշխատանքով շէնացնեն ու պայծառացնեն։

Եւ այսօր ծանր երկունքի մէջ սգաւոր Մայր

ՎԵՐԱԾՆԱԾ ՀԱՅՈՒՀԻՆ

Յատկապէս Տարազի համար նկարեց Միհ. Խուճուճց

միացեալ ոյժերով շարունակենք թեթևացնել, սպեղանիք դնելով Նրա յօշոտուած մասունքներին։

Եւ երբ վերածնուած Ազատ Հայաստանը հսկայ պատնէշ կանգնի զառամեալ, արիւնարբու լուսաւոր Եւրոպայի ու նրանից ոչ պակաս արիւնարբու, բայց խաւար Ասիայի մէջտեղը, Թող Նրա սուրբ Մասիսի գագաթից ջինջ արևը իր ջերմ, կենսատու պայծառ ճառագայթներով բուսուցանէ մեր նահատակ, մարտիրոս կոյսերի ու հարսերի, մանուկների ու ծերու-

Հայաստանի ուժասպառ մէջքը, Թող այս 1916 Թուականին նրա կենսունակ բեկորները՝ Հրաձիգ-Աւետարոյս ազատ ու պայծառ բողբոջները սրբազան Մասիսի գեղածիծաղ ծիածանով ամրացնեն։

Բ. Նազ

ՄԱՅՐԸ

(Գաղթական որբերին)

Լայներախ ձորերին իջաւ իրիկուն
Ու փռեց ամեն տեղ իր սև վերարկուն.
Զիւնապատ գագաթներն՝ ինչպէս ուրուներ,
Դժնդակ ու խոհուն պարզուել են վեր վեր...
Յոգնած, յուսաբեկ վայրեր անուղի,
Ամպերը թառած՝ չարիքով յղի,
Ու ողջ բնութիւն մեռելի նման.
Հնչում է քամին իր երգը թաղման։

Ով է մթան մէջ հեծեծում այդպէս.
Հոգմաբեր են արդեօք աւազում սրտակէզ.
Ի՞նչ լոյս է այստեղ զալկադէմ դողդողում,
Ո՞վ է՝ գիշերով օգնութիւն գոչում։

Հոգմերի գրկին անշող երկնի տակ
Անյոյս ճռինչով կանգնեց մի սայլակ։—
Բունազուրկ թռչուններ՝ հոգմերի սոյլերով
Այս ճամբ են գալիս տարաժամ գիշերով.
Հայրենի օջախից գրկւած են անճար
Ի՞նչ են որոնում՝ ընկած սար ու քար...
Այնտեղ՝ զաւակի դիակը սառած
Անզօր թևերով իւր գիրկը առած՝
Մայրն է կողկողում այդպէս դառնագին
Ու նզովք կարդում անգութ երկնքին...

Դժոխք վաթանի բոց ու կրակից
Այս մէկին փրկեց՝ դարկւելով հնգից,
Կթա ծնկներին՝ մահից հալածւած,
Այժ տւեց, փախաւ, կանչելով Աստւած,
Ու տարագրւող խեղճերը նրան
Տեղ տւին իրենց սայլակի վրան։
Ու գալիս էին լուռ ու մտազբաղ,
Կրծքներում խեղդած անզօր ախ ու վախ...

Դէպի նոր աշխարհ՝ ամեն ինչ թողած,
Ե՛ւ տուն, և՛ շիրիմ, և՛ ջուրն հայրենեաց...
Դէպի նոր աշխարհ, դէպի նոր ցաւեր,
Թռչունների պէս՝ խեղճ ու բնաւեր...
Ու սայլի վրայ մայրը խանդակաթ
Կրծքին սեղմելով որդին հարազատ՝
Ուզում էր պահել իրեն ջերմ շնչով,
Հանգիստ շնորհել օրօր-մրմունջով։
Բայց իւր ստինքներն երբ կէս գիշերին
Յղեց զաւակի սառ շրթունքներին,
Մի ճիչ արձակեց... իւր յոյսն էր մեռած...
Ոչ ձայն, ոչ տնքոց... ձեռ ու ոտ սառած...

Անհամբոյր լեռների սառցապատ կրծքին
Դողդոջուն ձեռքերով գրկած զաւակին
Ու երկինք յառած աչքերը անշարժ՝
Հնչում է այժմ ողբը աղեխարշ...
Ամայի դաշտերի կուրծքը լիզելով
Թռչում է քամին յուսահատ, խռով
Եւ տանում իր հետ ձայները սրտաշարժ
Ու ծեծում լեռների կուրծքը ապառաժ։

Այնտեղ, սարերի երկնահուպ լանջերին,
Ուր խօլ քամիներն են ոռնում ցաւագին,
Անյոյս վոհմակներ սոված գայլերի
Ծարսուռ են ազդում ձայնով սոսկալի,
Այնտեղ, ժայռի մօտ՝ մռայլ, վայրահակ,
Կայ մի գերեզման—անյայտ ու մենակ։
Ոչ քար, ոչ տապան, անշուք հողակոյտ,
Վերը՝ սև ժայռեր ու երկինք անփոյթ.
Լոկ ձմրան քամին իր սառ համբոյրով
Լիզում է նրան և անցնում խռով...

Ցարութիւն Պետրոսեան

Սգաւոր մայրը

Յատկապէս ՏԱՐԱԶԻ համար նկարեց Մ֊ք. Խունունց

ՀԱՅԱՍՏԱՆ

Երանի՛, բիւր երանի այն օրերին... Աչքիս առջև փուած էր իմ հայրենիքը, գարնան օրերին իր ղմ֊բուխտ զգեստովը զարդարուած։

Հուժկու լեռներն իրենց սպիտակափառ գագաթ֊ներով երկնքի կապուտակ ծոցումն էին հանգչում։

Նրանց ուսերի վրայ հերթական կուսի վարսերի նման ազատ անտառներն էին տարածուում։

Նրանց լանջերում բիւրերանգ հոտոտ ծաղիկնե֊րով ցանուած արօտների մէջ գառն ու մագին էին կայտռում։

Նրանց սիրառատ ստինքներից դրախտական աղ֊բիւրների զուլալ ջրերն էին ծափ տալով վազում դէ֊պի ներքև ցօղելու ծաղիկները, ջրելու գառները։

Գառան մայիւնի, աղբիւրի կարկաչի միջից բարձրանում էր հովւի սրնգի գեղգեղանքը։

Ուրախ էր հովիւ, ուրախ սարւորն ու բերւորը։

Բարդ֊բարդ լեռների պատւանդանի մօտ, ուր գետերն են գալարւում, քերում, շոյում, նրանց սը֊րունքները, շաղոտ ցողոտ հովիտներում երկրագործի եզն ու գութան, մանգաղն ու գերանդին էին անդադ֊րում գործում։

Գիւղերը շէն, տները շէն ու բարեվիճ։

Քաղաքներում կեանքը եռուն, առևտուրը ճոխ, արհեստները բազմազան։

Հայոց աշխարհը շտեմարան բիւր բարիքի, հիւ֊րընկալ յարկ օտարների համար, նոյն իսկ կերակրիչ տիրող բռնաւորների աւազակաբարոյ հարևանների։

Համբերատար աշխատասիրութեան գրկում ծաղ֊կող հայոց աշխարհ, իմ քաղցր հայրենիք։

—

Բայց... վա՛յ ցնորամտութեանս, այդ վաղուց էր...

Նախանձոտ բաղդին շատ երևաց հայի երջան֊կութիւնը։

Մի չարաբաստիկ օր դիւաբնակ այրերից մէկն ու մառախուղը հոսեցին, ծածկեցին Հայաստանի սի֊րով երեսը ծանր ու թանձր քօղով։

Լեռներն ամպերից ծածկոց առան, դաշտ ու ան֊դաստան խաւարի մէջ մտան։

Բարձրացան ահեղ մրրիկներ, հուժկու թափով անցան լեռներով ու հովիտներով ու փետեցին ծառ ու անտառ։

Նրանց ահռելի շնչից դարաւոր կաղնիների մէջ֊քը ծալւեց, ճիւղերը կոտրւեցին ու թօթափեցին։

Երկինքի սահանքները բացւեցին. հեղեղներ իջան երկրի վրայ, կործանեցին գիւղ ու քաղաք, շէն ու ապարանք։

Երկնքի մէկ ծայրից միւսը ճոռեցին հրեղէն գե֊տեր, որոնց հոսանքով սարսռեցուցիչ որոտով անցաւ երկնի կառքը, մահւան թագաւորը մէջը կանգնած։

Ջիերը կմախք, կառքը կմախքներից շինւած, տէրը կմախք։

Սա անցաւ իմ հայրենիքի երեսով. նա մի ձեռ֊քով մահ էր ցանում, ու միւս ձեռքի գերանդիով կեանքն էր հնձում։

Նրա գերանդու բերանով խոտի ծորերի նման թանձր ծորերով ընկան այր և կին, ծեր ու երիտա֊սարդ, մայր ու մանուկ, հարուստ ու աղքատ։

Մահը իմ հայրենիքի կեանքը հնձեց։

Հայաստանը, կեանքի որորանը այժմ միայն գե֊րեզմանատուն է դարձել։

Աւերը Հայաստանը, այս անօրինակ ընդարձակ գերեզմանատունը այժմ ծածկւած է խաչերով։

Մեռելութեան խաչը, մահու թագաւորութեան յաղթական նշանները, որ զարդարում են Մահուան ան֊ցած կտրած ճանապարհը։

Տեղ֊տեղ միայն մահամերձի հևքով խաչերի պատւանդանը գրկած սգաւոր մայրեր, վայողբուերին ձայնակից։

Ահա այժմ իմ հայրենիքը...

Ու մոլորւած, քարացած աչքարհիս վրայ քար կտրած հարցնում եմ՝ հայրենի՛ք, ով կործանեց քեզ, ո՞ր ձեռքը վայրագ։

Բենիկ Վարդապետ

Zwischen

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻ ԱՆՏԻՊ ՆԱՄԱԿՆԵՐԻՑ

Առ գաղթական հայկազունս յԱմերիկա

Որդիք Հայրենեաց եւ պատուական Սիրելիք։

Խրիմեան Հայրիկ նախապէս ողջոյն և օրհնութիւն կը նուիրէ Ձեզ. Բիւզանդիոնի տարագիր վայրէն, ուր անընդհատ չղթայով կաշկանդուած եմ։ Որչափ քաղցր կը լինէր եթէ գիրս գրէի Ձեզ Վասպուրական Աշխարհէն և Մշոյ դաշտէն գէթ հայրենի շնչով խօսէի և հայրենի ծաղկանց հոտով բուրէի Ձեզ հայրենասիրութեան հոտ։

Այլ ուրախ եմ զի հայրենիք առանց Հայրիկի ձայնին կը խօսի ընդ Ձեզ. և ինչ հրաշալի է իւր ձայն և հոգին, որ կը հասնի յայնկոյս մեծին ովկիանոսի։ Գիտես թէ Մայր Հայաստանի ծոցէն տարագիր որդիք որչափ հեռանան նորա գրկէն, այնչափ աւելի կը սիրեն և կը յիշեն Մենացեալ այրեցեալ Մայրն։ Այո, այսպէս է, թէ չէք հաւատար Ձեզ օրինակ բերեմ Իսրայէլի Յակոբայ որդիքները զորս երուսաղէմէն վարեցին տարին մինչև ի Բաբելոն, ուր գիտին եղերք նստած կուլային և կը յիշէին Մայր Սիօն։ Գերեվարներ կատիպէին զիրենք որ կարդան Սիօնի օրհնութիւն և սաղմոսներ երգեն, նոքա կը պատասխանէին թէ զիարդ օրհնեսցուք զօրհնութիւն յերկիր օտար, կտակարաններ փակեցին, կախեցին ուռենի ճիւղերէն, չէին ուզեր բանալ և կարդալ իսկ։

Այս ոգին կը մաղթեմ Ձեզ. որ օր մի հայոց ցրուեալ որդիքներ դառնան և շինեն մեր հայրենեաց Տէրունի տաճարները, կը լսեմ թէ Ամերիկայի սրտին վերայ հայու տաճար մը շինել կուզէք, չեմ մեղադրեր զՁեզ. վի գաղթական հայերու հաւատք եւ խելք միշտ այդպէս է, և այդպէս կը լինի։ Այլ խրատ և խորհուրդ կուտամ Ձեզ, որ այդ տաճար եղեգնէ շինեցէք, տաղաւորեակ շինեցէք ինչպէս Սինայի ժողովուրդ. այո այնպէս շինեցէք որ դիւրապէս թողուք, վի Ձեր առաջ պիտի բացւի աւետեաց և հայրենեաց երկրի տղատութիւն. այս նպատակին ուղղեցէք, ի դադարէք, մի երկմտէք, քալեցէք և յառաջ քալեցէք, Ճեսուն Ձեր առաջնորդը։ Մի օր հին երիքով Ձեր փողերու ձայնով կըշարժի և կը քանդուի։ Այդ օտար աշխարքի պերճանքներ թող չհրապուրեն զՁեզ, Ձեր պերճանք Մասիսն է, Այրարատն է, Էջմիածնայ գմբէթն է, յառեցէք Ձեր աչք այն գմբէթի խաչին։ Ընկերական սուրբ ոգւոյն կրակ վառեցէք Ձեր-սրտին մէջ, որոյ կարմիր կարմիր կայծիկները թռուցէք ի Հայաստան։ Օրհնեալ էք դուք որ կը յիշէք Պօլսոյ տառապեալ չարչարեալ պանդուխտ հղբայրները. մանաւանդ դատապարտեալ Մշեցիներ, որ Պօլսում Վէզիր-Խանի մէջ աննկարին սակաւապետութեամբ դեռ կը տառապին կը համբերեն և դատաստանի արդարութեան կսպասեն։ Եւ դուք յիշելով սոցա դառնագոյն կեանք, Ամերիկայէն մինչ ցաստ կարեկից կը լինիք և կը յղէք Ձեր լուման, որ այրի հնոջ տուած լումային չափ մեծ էր առաջի Աստուծոյ։ Ա՛ռ այս օրհնութիւն և յաջողութիւն կը մաղթեմ Ձեզ։

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԸ

Եւ կը մնամ միշտ աղօթարար

Հայրիկ

1890 փետրուար 22
Պօլիս

II

Ընիկ Նոր Նախիջեւանցի Ախալցեւանց Լուսեղէն սիրելոյդ մերոյ ողջոյն եւ օրհնութիւն նուիրեմ մաղթելով վասն Ձեր առողջ կեանք եւ աշխատութիւն։

Ձեր պատուական ընծան ամենայն ուրախութեամբ ընդունեցի, դու ինչ գիտէիր որ Հայրիկ ձեր ու մոռացկոտ լինելով միշտ մոռանում է թէ մտած ու ելած թուղթեր ուր է դրեր, այսպիսի մի գեղեցիկ ու յարմարագոյն բան պատրաստեիր իրեն համար և գիտէս թէ քանի՛ առաւել հաճոյական եղաւ այս ընծան, որ նոյն իսկ քո ձեռաց և աշխատութեան գեղարուեստնէ.

Երանի՛ թէ ամէն արհեստաւոր իւր ընտիր ձեռագործէն մի բաժին հաներ Հայրիկին։ Ես կը սիրեմ և կօրհնեմ ազգին արուեստաւորներ, մանաւանդ այն ճարտար արուեստասէր անձինք, որ կաշխատին արուեստն յառաջ տանել։

Դու գիտես որ կեանքի համար ամենէն ապահովագոյն արհեստն է, մեր նախնի ջոջեր ասեր են որ հարեհատն ոսկի պիւալդիկ է։

Զգիտեմ ձեր տոհմական անուանց մէջ ինչպէ՞ս եղած է, որ արական սեռերուն Լուսեղէն անուն կը դնեն, չլինի որ հրեշտակաց հետ խնամութիւն արած էք։

Ուստի կաղօթեմ, որ Աստուծոյ և իւր հրեշտակաց օրհնութիւն ձեր համայն ընտանեաց վրայ լինի. մարմնաւոր կեանքի մէջ իբրև լուսեղէն հրեշտակ ապրին։

Աղօթարար

Հայրիկ Հայոց

1894. փետ. 28։

(Վեհ. Հայրիկի խօսքեր ուղղած Ամերիկահայ ժողովրդին)

Ողջոյն Ձեզ պանդուխտ որդիք Հայոց, որ բաղդն զՁեզ հայրենի աշխարհէն վարել տարել է մինչև Ամերիկա։

Ողջոյն Ձեզ Արարատեան աշխարհէն Մասեաց Նոյեան տապանէն Էջմիածնայ սուրբ տաճարէն։

Ողջոյն ձեզ Հայոց Հայրիկէն, ո՛, տայր ինձ որ աւետիս տայի Ձեզ իբրև Նոյեան աղաւնին թէ ցամաքեցաւ ջրհեղեղ, դարձէք, ակէք Ձեր Հայրենի աշխարհ։

Սիրտ առէք քաջալերուեցէք անքաղդ և բախտաւոր պանդուխտ որդիք Հայոց, Աստուծոյ այցելութիւն մօտ է մեր չարչարեալ աշխարհին։

Ողջոյն տուէք նաև մեծ հնարիչ **Էդիսոնին**, *որ իւր հրաշալի գիւտով զիմ կենդանի ձայն առաւ բերաւ Ձեզ։ Կեցցէ յաւերժ ինքն և իւր գիւտի յիշատակ։*

Կը շնորհաւորեմ Ձեր մուտ ի նոր տարին կեանք և յաջողութիւն մաղթելով Ձեզ։

1895. յունուար 8։ ի Պօլիս։

Հայրիկ

Ամերիկահայ սանիտար. խումբը, տանկահայ փախստական եւ ռուսահայ մշաւորականներ լուսանկարուած Գրական-Գեղագիտական Սալօնում դեկտ. 13-ին 1915 թ.

Նստածները՝ 1. Համբ. Առաքելեան; 2. դր. Նեպտօն-խան Ազգապետեան; 3. Եղիսաբէթ Ալթունեան (ամերեկուհի); 4. Իւլիա Սպենդերեան; 5. Աննա Ազգապետեան (ամերիկուհի); 6. Մայրապետ Հռիփսիմէ Թայիրեան; 7. Բենիկ վարդապետ; 8. Տիկին Բալեան (ամերիկուհի); Կոյս Աննա Խոջամինասեան; 10. Կոյս Մարիամ Թօլմաղեան; 11. Աւետիք Եղիկեան;

Կանգնածները՝ 1. Պետրոս Դէվճեան; 2. Յ. Զիգճանեան; 3. Ալ. Ստեփանեան (Սանդրօ); Օթելիա Գանջեցեան; 5. դր. Ալթունեան; 6. Պրօֆ. Մ. Մինասեան; 7. Պ. Սարգսեան; 8. Բժշկ. Ի. Նաւասարդեան; 9. Իր. Մեսրոպեան; 10. Բժշ. Բ. Աղասարեան; 11. Վահրամ Գրիգորեան; 12. Ծովհ. Ծէր-Գրիգորեան (Վանօ); 13. Զաւէն Յովհաննիսեան; 14. Նաւարշ Հովհաննիսեան; 15. Փէհրիսեան;

Լուսանկարեց Տարազի աշխատակից—լուսանկարիչ Գր. Բաբալեան;

Ամերիկահայ սանիտարական խումբը, որ նկել է հեռու աշխարհից օգնելու Մայր Հայաստանցիներին, չը ստանալով բագաժը հարկադրուած էր ուշի ուշ երկար օրեր մնալ Թիֆլիսում։ Մեր ցանկալի հիւրերից տիկին Anna Azgapetian *սիրալիր տուաւ նկարկայ տողերը* **Տարազի** *համար, որ անգլիերէնից թարգմանեց նրա ամուսին, սանիտարական խմբի առաջնորդ դր. Նեպտօն-խան Ազգապետեանը։*

ԹԻՖԼԻՍԸ ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՉԵՐՈՎ

Թիֆլիսը պիտի միշտ սիրեմ։

Այս իմ առաջին խօսքն է որ իմ օրագրումս գրել եմ մեր Թիֆլիս հասած օրը։ Արխանգելսկի ու Պետրոգրադի ձիւն ու բուքից, ցրտից ու մթութիւնից յետոյ, Թիֆլիսը մեզ նմանեց մի դրախտի։ Հասնելով գիշեր ժամանակ, մեր գնացքի պատուհաններից քաղաքը, իր հազարաւոր ճրագներովը, կարծես նմանում էր մի աստղազարդ երկնքի։ լայնատարած պլպլացող լոյսերն անդրադարձնում էին, որպէս մի ծովում, երկնային կամարի բիւրաւոր աստղերի շողերն։

Հետեւեալ առաւօտն, Թիֆլիսի ձմեռային արեգակը մեզ պարգեւեց իր լոյսն ու ջերմութիւնն, որի նմանը չէինք վայելած Ամերիկայից մեկնելուց ի վեր։ Վարժւած լինելով Նոր Աշխարհի հարթ և ուղիղ փողոցներին, իւր սեազգեաց մարդերով ու գեղազգեաց կիներով, Թիֆլիսը մեզ ներկայացրեց մի զարմանալի պատկեր հին աշխարհից։ Այստեղ տղամարդիկ են, որ տեսարանի զարդարանքն են խեղճ համբալների դուռնաւոր քուրջերից սկսելով, մինչև հպարտ զինուորական-ների գեղեցիկ համազգեստները։ Մի տարօրինակ երևոյթ էր ինձ համար տեսնել փողոցներումս համբերատար փոքրիկ աւանակներ և ծանրաշարժ եզներ, գոմէշներ և ուղտեր, վասնզի Ամերիկայում գոմէշներ և ուղտեր միայն կենդանաբանական պարտէզներում կան, իսկ էշեր ու եզներ միայն ագարակներում։

Արևելքի բազմազոյն և պատկերանման տեսարանները սիրողին համար, ոչ մի երևոյթ աւելի հետաքրքրական է քան Թիֆլիսի բազարները։ Իմ հայրենիքում ևս կան մեծ շուկաներ, սակայն այնտեղ ամեն բան, ըստ սովորութեան, այնպէս կարգ ու կանոնի և չափ ու ձևի վերածւած է, որ գեղագիտութեան տեսակէտից, նրանք չունեն որևէ մի հրապոյր։ Միշտ արևելքում բնակողներին համար դժւար է հասկանալ թէ որչափ մեծ հաճոյք է ինձ պատուհանիցս դիտել զարմանալի կերպով և զանազանապէս զգեստաւորեալ բազմութեան մը երթևեկութիւնը, և յետոյ, աչերս բարձրացնելով, կանաչ ու կարմիր տանիքների ու գմբէթների վրայից, նայել խորտ ու բորտ և անծառ բլուրներին, և աւելի հեռուն ևս տեսնել սպիտակ սարեր ու գագաթներ, որոնք պարծանքն են գեղեցիկ ու լեռնապատ Թիֆլիսին։

Գիշերները յաճախ հաճոյքով դիտում եմ Թիֆլիսի բիւրաւոր լոյսերն, որ կարծես սողում են շրջակայքի բլուրներն ի վեր դիմաւորելու երկնից պլպլացող աստղերին։ Տեսնում եմ հեռուից հասնող գնացքը, որ գիշերային մթութեան մէջ, մի լուսաւոր ասուպի նման, սլանում է դէպի իր կայարան և իմ սիրտը ուրախանում է, վասնզի, ինձ համար, նա պատգամաւորն է այն եւրոպական քաղաքակրթութեան զոր ռուսերն բերին աշխարհի այս հեռաւոր անկիւնը։ Նրանք արժանի են ընդհանուր մարդկութեան երախտագիտութեանը, վասնզի մաքառելով հարիւրաւոր տարիներ մոնգոլեան բարբարոսութեան դէմ, որն որ արգելք եղաւ իրանց սեպհական յառաջադիմութեան, նրանք աւրհ տալին Եւրոպային, որ ապահով առաջ գնայ քաղաքակրթութեան շաւղին մէջ։

Ի՞նչ հրաշքներ է գործել Թիֆլիսում այդ երկաթուղային լուսազարդ գնացքը։ Զոր օրինակ նա ունի այսօր մի քաղաքային թատրոն, որի նման մի պաշտօնական հիմնարկութիւն, հարուստ և թատերասէր Ամերիկան դեռ ոչինչ չունի, և ուր իր հազարաւոր թատրոններն միշտ անհատական ձեռնարկներ են։ Եւ որչափ սիրուն է իր ծառազարդ դիրքը, և որչափ գեղեցիկ իր արևելեան ճարտարապետութիւնը։ Ներքին զարդարանքին մէջ աքանչելի է կապոյտ գոյների նուրբ գործածութիւնը, կատարեալ ամենայն մանրամասնութիւններով, բեմից մինչ առաստաղ։

Մինչև իսկ լոյսերն ներդաշնակում են ընդհանուր գեղեցկութեան հետ, վասնզի բոլոր կանթեղների շողերն մեղմացրած են սառած ապակիով, և կախւած մեծ ելեքտրական ճրագն ալ ներկւած է բաց մոխրագոյն։ Իմ այցելած երեկոյին, ներկայացրին Վերդիի Տրաւիատան։ Բարեբախտութիւնն ունեցել եմ տեսնել մեծն Սառա Բեռնար «Կամիլլ» թատերախաղում, որ նոյն վէպին վրայ հիմնւած է, և լսել եմ նաև նշանաւոր Տետրացինու երգելը այդ դերում։

Չնաշխարհիկ Սարայի խաղը և Տետրացինու մեղեդիները ցկեանս պիտի յիշեմ. սակայն երբէք չեմ տեսել մի աւելի գեղեցիկ ներկայացում քան այս արքունական թատրոնի Տրաւիատան։ Եւ ինչ կարևոր նշանակութիւն ունի դա ինձ համար, վասնզի ոչ հիմնարկութիւնն ունի աւելի ազդեցութիւն քան թատրոնը։ Մի ներկայացումից, մարդ երբեմն կարող է աւելի օգտւել քան տասնեակ դասախօսութիւններից։ Թերևս հարիւրաւոր հանդիսականներից միայն մի քանիսն զգային այն մեծ բարոյական դասը որ ստանում էին, բայց անշուշտ բոլորն էլ Գեղեցիկին ու Բարիին ազդեցութեան տակ եկան, և արդեօք դորանք աղնւացուցիչ և զարգացուցիչ ազդակներ չեն—թէ անհատին, թէ քաղաքին և ազգին համար։

Թիֆլիսի ժողովուրդ, հպարտ եղիր քո այս զարմանալի ու գեղեցիկ հիմնարկութեան նկատմամբ, ինչպէս որ ես էլ հպարտ պիտի լինիմ նկարագրել զայն և ձեր սիրուն քաղաքը, երբ վերադառնամ Ամերիկա։

Եւ երբ այստեղից մեկնեմ, իմ օրագրին վերջին խօսքը պիտի լինի.

«Սիրում եմ Թիֆլիսը։»

Anna Azgapetian

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐԸ

Խորհրդածելու ուսանելի է այն կորովի հայ անձի կենցաղը, որ հանդէս է գալիս համազգային կեանքի պատմական ասպարէզում, ընդհանուրի Հայր, Հայ-

Ամենայն Հայոց Տ. Տ. Գէորգ V. Կաթողիկոսը իր գրասենեակում

րապես կոչումով՝ վերադիտելու, դեկավարելու և խնամատածելու մի խոր հնագոյն ձէն-ձէն եղած, վայրավարին ազգ։

Ծանր է Նրա լուծը և խորհրդաւոր։

Հէնց միայն այն յիշենք, որ Նա պարտաւոր է մի ամբողջ ազգի համար ազօթել, մոզ շարունակ խորհել ու գործելը. Ինչ վեհ տեսարան՝ մի անձ սոսկ միայն ազօթում է մի ամբո, յոդնակարիք, նշանաւոր ազգի գրութեան համար. ինչքան սրբազան լրջութիւն և ուշ ու մտքի ուժգին լարում ծք է պէտք։

Կաթողիկոսութեամբ Նա կատարում է Իր կեանքի վերջին շրջանը, Նա այլևս չունի ոչինչ անձնական հոգս. Նա ամբողջապէս տոգորած է Իր Աստուածադիր առիղ պաշտօնով։ Նա աշխատում է տան և ութ ժամ, որովհետև Նրա խոհերի թիւը անընդհատ նեիրւած է ազգային-եկեղեցական գործերին։ Նա զբօսանք չունի, երբեք զբօսանքի չի հինում։ Վեց ժամ, որ յատկացրած է քնի, անշուշտ Նրա հրաշանքը և անուրջներն էլ վերաբերում են Իր ազգին։

Հայոց հեթանոսական պաշտամունք

Նա շարունակ միայնակ է, ողջ ազգի բեռը բարձած Հայրապետը, միայնակ է Իր խոհերով, գործնական թղթերով և զբաղմունքներով։ Նա մենակեաց է, բառիս ամենալայն մտքով. եթէ միջին թուով հանապազօրեայ չորսական ժամ հաշուենք զեկուցումներին և ընդունելութիւնների համար, մշտապէս Նա օրական քսան ժամ բացարձակապէս միայնակ է լինում. աւելորդ է ասել, որ Նա միայնակ է ուտում, խմում, քնում, առանձնացած իր ապարանքում, որ վեհարան է կոչւում, վեհ մարդի գործարան, որ մի խորհրդաւոր ամրոցի է նման, ուր Քրիստոսաւանդ հանրաշահ սիրով մէկն Իրեն նւիրել է անձնազոհ մենաւորութեան, ուր Նա պիտի ճգնելով և տքնելով գոէ, բիւրեղացնէ Իր որոշումները, վճիռները, ձեռնհրէցութեան խոհերը, դիտաւորութիւնները և նրանց իրագործանացնելու գործելակերպը։ Նա չը պիտի վրիպի, Նա անսխալական պիտի լինի։

Այդ է պատճառը, որ վեհարանի տեսքը և Նրա մօտով անցնելիս մարդ անտարբեր չի լինում, այլ զգում է պատկառանք և լրջութիւն, որպիսին ազգում է և ս. Էջմիածինը իր բոլոր շրջապատով։



Հայրապետական Գաւիթ Իջման ս. Տաճարում

Կաթողիկոսը քննիչ արթնանում է առաւօտեան ժամասացութեան Ազդարարի զանգահարութեան հնչելուն պէս, երկար պիշերաերին ժամը վեցին, իսկ երկար օրերը հինգին, առաւօտեան ազօթքը կատարում է առանձնակի վեհարանում. թէյից յետոյ գնում է գրասենեակը պարապելու։ Կարճ օրերին ժամը իննին մտնում է գիւանապետը ամենօրեայ զեկուցումներով, նայելու և ստորագրելու թղթերը ներկայացնում նոյնը կրկնում է դիւանապետը և զինի ճաշու 5—6-ին։

Եկեղ հիւրերը կամ գործատէրեր ներկայանում են նախաճաշից և ճաշից առաջ։

Հիւրընկալը կարող է ըստ հարկին ամենայարմար ժամին մտնել վեհարան և տեղեկութիւն տալ եկեղների վերաբերեալ կամ ներկայացնել։

Լուսարարապետը, վանական կառավարութեան նախագահը, տպարանի և ճեմարանի տեսուչները ոչ ամեն օր, այլ պաշտօնի պահանջած դէպքում են ներկայանում Վեհին, նոյնպէս և սինոդի անդամները և ատենադպիրը. ի հարկէ հարկաւոր ժամանակ Վեհը նրանց կանչում և յայտնում է Իր հրամանները և տնօրէնութիւնները։

Յատկական խորհրդակներ նշանակւած չըկան, այլ խորհրդակցում է, որոնց հետ բարեհաճում է. սինոդի օրագիրներն անձամբ կարդում է և ստորագրում, կարևոր կոնդակները ինքն է կազմում, քաջ վարժ լինելով գրոց լեզուին։

Մշտական կարդալու գիրքն է Աստուածաշունչ, նայում է և օրաթերթերը։

Սնունդի համար Թիֆլիսից և այլ տեղերից մըթերք չի բերւում, այլ գոհ է լինում միջավայրում ճարւածներից. կաթնեղէն և թռչնեղէնը գերազաս են Վեհի խորհրդների մէջ։

Վաղարշիպատի եկեղեցին ներսից

Վառօդն գոյնով հազուագտնւր չի հաղնում, այլ մուգ գոյնի, ինչպէս և շաքիրնները կարմիր շորեր հագնում են միայն խիստ հանդիսաւոր տօներին։ Վեհը ծածկում է մոյգ կինէմանի փիլօն, իսկ մեծ պահքին մոյգ կապոյտ։

Որչափ հնար է փիլիքապէս աւելի ժամեր նւիրելով Հայրապետական գործունէութեան, Վեհը գիշերւայ ժամը տասին համեստ ընթրիք վայելելով, կէս գիշերին ժամը տասնմէկին կանգնում է հանգստեան երկայն աղօթքի ու ջերմ քահանայապետական ապերասարկու մրմունջները վեր առաքում Բարձրեալին իր ազգ համար։

Գիշերւայ ժամը տասնմէկ և կիսին Վեհը մրտնում է հնջարան. անմիջապէս ելեքտրական կայարանը գադարում է գործելուց։

Գիշերապահները վանքի շուրջը չորս նաւթի լապտեր

Տաճկահայութիւն ուսանող գիտում աշխատանքը շարունակելիս

վառելով, սկսում են գիշերային հսկողութիւնը աւելի աչալրջութեամբ։ Վեհից ուշ քուն մտնող չը կայ ս. էջմիածնում։ Մեր Հայրապետը առանց խնայելու գործադրում է իր բոլոր ոյժերը խղճմտանքով։

Ն. վ. Տեր-Ասեփեան

Պետրոգրադի Հայկական կոմիտէի նորաբաց որբանոցը Վարդիվիսայում.
Մէջտեղը կոմիտէի վարգօր տ. Ղուկասէթ Ասրիքէկեան եւ առաջին՝ սպիտակ սաւանում օր. Մարիամ Ասրիքէգեան.

Նապօլի. Կաժօրա.



ԽՕՍՔԵՐ ՊԼԷՇՅԵԻԻ ԵՐԱԺՇ. ՉԱՅԿՈՎՍԿՈՒ

ՅԱՄԱՌԱ ՊԱՐՏԷԶԸ

ՄԻ ԵՐԿՈՒ ԽՕՍՔ ԵՐԳԵՑՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ինչպէս որ լեզուն քերականութիւն ունի, այնպէս էլ երգեցողութիւնը ունի իր տեսական մասը, որի դէմ մեր սովորական երգեցողութիւնը խիստ մեղանչում է։ Ինչոյքներում մեր երգը անտանելի է. Թաշճեանի հնարած ձայնագրութիւնը մի քանի այնպիսի անյարմարութիւններ մուծեց մեր հոգևոր երգեցողութեան մէջ, որ ոչ ազգային աւանդութիւն է և ոչ կանոնաւոր երաժշտական սկզբունք, իսկ դպրոցի մէջ աւանդած երգեցողութեան ուսումը՝ իր խիստ անշնորհ ընթացքով՝ ցաւին դարման տալ չի կարողանում։ Ի լրումն այսր ամենայնի մեր հմուտ երաժիշտները, որոնք լաւ են հասկանում արուեստը, իրանց գիտեցածը զլանում են հաղորդել մեզ։



Սեդրաք Մանդինեան

Հուսանկարւած Կոպէնհագէնում

Այս գրւածքիս նպատակն է միայն մանկավարժական տեսակէտից շօշափել սոյն խնդիրը։ Ինչպէս որ այժմեան մանկավարժութիւն աշխատում է մանուկներին լեզու ուսուցանել ոչ թէ քերականութիւնը հէնց սկզբից նրանց ձեռքը տալով, այլ ընտիր հատւածներից քերականական կանոններ հանել տալով, այնպէս էլ արդեօք կարելի չէ՞ երգեցողութիւնն այնպէս ուսուցանել, որ երգած ընտիր երգերից հանւի երգեցողութեան տեսութիւնը և հասկանալի կացուցանւին երաժշտական օրէնքները։

Թէ արդարև այդ հնարաւոր բան է, մենք ուղղակի կընտրենք մի երգ, և ի հարկէ այնպիսի երգ, որ բարձր երաժշտական նշանակութիւն ունենայ և բանաստեղծական իմաստին համեմատ յօրինւած։ Ցաւում ենք, որ ազգային երգերից օրինակ չենք բերում, նախ և առաջ այն պատճառով, որ չենք ուզում սբխալւել ընտրութեան մէջ։ Ահա Աղբիւրի ապրիլ համարում տպագրւեցաւ «Յիսուսի պարտէզը», որ ուսերէնից վերածեց պ. Եղեկեանը. երգի բանաստեղծն է Պեճչեեւ, եղանակի յօրինիչն է Չայկովսկի։ Ուրեմն թէ բանաստեղծութիւնը և թէ երգահանութիւնը ապահով հեղինակների գործեր են, և այդ պատճառով մենք ընտրում ենք յիշեալ օրինակը։ Հետեւեալ բացատրութիւններից այն ևս կերեւայ, թէ ինչու դժւարացանք ազգային երգերից օրինակ տալ։

ԵՒս այժմ մի կողմը կը դնենք երգից առաջ նրա բանաստեղծութիւնը և բառերի իմաստը լաւ հասկացնելու եղանակը և մեծ կարևորութիւնը։ Մենք դառնանք անմիջապէս երաժշտական մասին։

Ամենայն երգի մէջ նախ և առաջ պէտք է որոշւի իրա սեպհական ութնեակը։ «Յիսուսի պարտէզը»



Ի. Պ. Չայկովսկի

յօրինւած է G. dur կոչւած ութնեակի որակներով, որի ամբողջ պատկերն այս է.

g	a	h	c	d	c	f	(is)	g
1	2	3	4	5	6	7		8
....8*								1....

Մեր երգերի մէջ այդ ոլորակներից մի քանիսները (7, 8) բնաւ չեն գործածւում իսկ ընդհակառակ նրա մէջ պատահում են աւելորդ ոլորակներ ցածր ձայներից և որ մենք աստղանիշ թւանշաններով ա-

ՅԻՍՈՒՍԻ ՊԱՐՏԷԶԸ

(Եղանակած է Զայկովսկի)

Պարտէզմ՝ ունէր մանուկն Յիսուս,
Ուր նա բուսցրեց վարդի թփեր.
Ոռոգում էր, խընամում էր,
Գլխին պըսակ հիւսել կամէր։

Իսկ երբ վարդերըն բաց եկան,
Եկնեը [1]) մանկտուն երեա [2]) նա ձայն.
Ժողովուեցան, քաղքաղեցին,
Պարտէզն ամեն աւարեցին։

«Ո՛րպէս կ՚հիւսես արդ դու պըսակ
Պարտիզումը էլ չըկայ վարդ»։
Մոռանում էք. ինձ փըշերն արդ,
Ասաց Յիսուս, մընում են զարդ։

Եւ փըշերից բոլորեցին
Նոքա պըսակ նորա գլխին.
Եւ, զարդի տեղ, կայլակեցին
Արեան կաթիլք իւր ճակատին։—

Վերածեց հայերէնի
Ա. Մ. Նզեկեան.

---

[1]) Եփրայեցի մանուկներին։
[2]) Երեա—տըւեց։

ш. Был у Христа младенца сад,
р. И много роз взростил Он в нем.
ц. Он трижды въ день их поливал,
ц. Чтоб сплесть вѣнок себѣ потом.

ե. Когда-же розы разцвѣли,
ц. Дѣтей еврейских созвал Он;
է. Они сорвали по цвѣтку,
ը. И сад был весь опустошен.

թ. «Как ты сплетешь теперь вѣнок,
ժ. В твоем саду нѣт больше роз».
ժա. —Вы позабыли, что шипы
ժբ. Остались мнѣ, сказалъ Христос.

ժգ. И из шипов они спелли
ժդ. Вѣнок колючій для Него,
ժե. И капли крови, вмѣсто роз,
ժզ. Чело украсили Его.

ռաջ կը բերենք. ուրեմն երգի իսկական ոլորակների շարքը հետևեալն է.

d e fis g a h c d e
5* 6* 7* 1 2 3 4 5 6

Արդ՝ իւրաքանչիւր ութնեակ ունի 3 խիստ նշանաւոր ոլորակ, որոնք, եթէ կարելի է այսպէս ասել, ութնեակի սիւներն են կազմում, և դրանց որոշ տարբերութեան վրայ է հիմնւած երաժշտութեան արւեստի գաղտնիքը. դրանք եւրոպական անունով կոչւում են՝ tonika, dominantա և subdominantա, կամ հայերէն՝ հիմնական խաղ, տիրող խաղ, և ներքնատիրոյ խաղ. Ութնեակի 1-ին և 5-դ ոլորակները կազմում են նրա հիմնական և տիրող խաղերը, ուրեմն մեր օրինակում՝ g և d ոլորակները: Եւ որովհետև ութնեակի այս հակադիր խաղերը ամենայն երգի մէջ նրա մղիչ զօրութիւնն են կազմում, կամ մի ուրիշ նմանութիւն գործածելով՝ նրա լոյս ու ստուերն են կազմում, ապա ուրեմն երգեցողութիւն սովորողը իսկոյն պէտք է զգայ այդ խոշոր զանազանութիւնը, հետևապէս նախ և առաջ պէտք է վարժւի, որ կարողութիւն ստանայ 1-ն և 5-դ աստիճանի ձայները որոշելու: Երբ որ այդպիսի վարժութիւններով ութնեակի իսկական խարիսխները ականջում և ձայնով հաստատւին, այնուհետև ամբողջ ութնեակի եղանակը կարելի է դիւրաւ ձեռք բերել և հասկանալ նրա արւեստական շէնքը և երաժշտական եղանակի կազմութեան օրէնքը: Արդ՝ եթէ այդ եղանակը իր բնական մասերի լուծենք, կը տեսնենք, որ ութնեակը երկու հաւասար բաժիններից է կազմւած, որոնց սկզբնական ձայներն նոյն խարիսխներ են՝ հիմնական խաղը և տիրող խաղը. այդ բաժինները հաւասար են թէ եղանակաւորութեամբ և թէ դաշնակութեամբ և կոչւում են tetrachordներ (չորեքաղիներ), որոնցից երկրորդը ձայնական հինգերորդ ոլորմամբ բարձր է, քան առաջինը (1, 2, 3, 4—մի չորեքաղիք, 5, 6, 7, 8—երկրորդ չորեքաղիք): Ապա ուրեմն հարկաւոր է լաւ վարժեցնել նախ առաջին չորեքաղին, ապա երկ-



րորդը: Եւ կը տեսնենք, որ իւրաքանչիւր չորեքաղիք ունի իր մէջ աւելի մանրագոյն և նշանաւոր եղանակութիւններ. նախ՝ 1, 2, 1, որով ստանում ենք ականջի համար լաւ լսելի և ազդու տպաւորւող առաջին կատարածը կամ ձայնի հանգիստը (կադէնց), երաժշտական վերջակէտը, որը հետևեալ բարդութեան մէջ՝ 1 2 3, 3 2 1 իսկոյն կը լսւի իբրև արդարև ձայնից կատարւում կամ հանգիստ: Եթէ երրորդ եղանակաւոր հատւածը ևս (այսինքն կիսաձայնով*) կազմւած հանդիստն ևս) 3 4 3 և ընդհակառակ 4 3 4 վարժւի, հուսկ ուրեմն այս բնականի բաժիններից ամբողջապէս կը լսւի չորեքաղին՝ 1 2 3 4 և 4 3 2 1: Մի և նոյն կարգով կազմելով երկրորդ չորեքաղիքն էլ, մենք կը ստանանք ամբողջ ութնեակը: Սակայն այս ամենը լոկ միայն երաժշտական անմշակ նիւթեր են, տարրական այբուբէն են, ինչ որ մենք մինչև ցայս վայր ստացանք. նրանք դեռ պէտք է կշռաւոր յօդաւորութիւն առնեն, որպէս զի նրանցից դաշնակաւոր նւագութիւն և հնչտալուր երաժշտութիւն դոյանայ: Կրկին նոյն երկու եղանակաւոր խարիսխները՝ հիմնական և տիրող խաղը՝ կարող են այդ հանգամանքն էլ ձեռացնել և որոշել. եթէ դրանք աւելի ազնըւագոյն ձայնական կշիռ կամ շեշտ ստանան, քան միւս ձայները $\left(\overline{1}\ \overline{2}\ \overline{3}\ \overline{4}\quad \overline{5}\ \overline{6}\ \overline{7}\ \overline{8}\right)$, ութնեակը կը բաժանւի երկու քառամասեայ չափերի կամ ամանակի, որոնցից իւրաքանչիւրը եթէ դարձեալ բաժանւի և ձայնական կշիռն էլ եթէ համապատասխան կերպով նրանց մէջ բաշխւի, ութնեակը հետևեալ դաշնակաւոր ձևը կը ստանայ՝ $\overline{1}\ \overline{2}\ \overline{3}\ \overline{4}\ \overline{5}\ \overline{6}\ \overline{7}\ \overline{8}$: Բայց ասացինք, թէ ութնեակը մի ուրիշ խոբիսխ ևս ունի սուբդոմինանտ կամ ներքնատիրող խաղ անունով, որ նոյնպէս պէտք է լաւ տպաւորւի աշակերտի ականջի մէջ. այս վախճանաւ նա էլ մասն պէտք է ստանայ ութնեակի եղանակաւոր ձևացուց-

*) Թաշճեանները զարմանալի յամառութեամբ պնդում են, թէ դրանք կիսաձայներ չեն, ուստի մեծ չփոթութիւն է տիրում դրանց արւեստի մէջ:

տան ինչ, որով մեծ մեծ ինստիտուտ չորս նոսրացնող չափեր, կամ սրտանգիների տոնը նիկոլ ուժգին դուրս գան։

Մեզ մի քանի օրինակներ կբերենք ավելի պարզ դարձնելու համար։

Եվ	$\frac{8}{1}$	$\frac{7}{1/4}$	$\frac{6}{1/4}$	—	$\frac{5}{3/4}$	$\frac{4}{1/4}$	$\frac{3}{1/4}$	$\frac{2}{1/4}$	$\frac{1}{3/4}$
Իվ	$\frac{1}{1/4}$	$\frac{2}{1/4}$	$\frac{3}{1/4}$	—	$\frac{4}{3/4}$	$\frac{5}{1/4}$	$\frac{6}{1/4}$	$\frac{7}{1/4}$	$\frac{8}{3/4}$

Ձայն ձայնիվ արձակվելիս ինձանից բոլոր ցոլմունքները և ուսուցիչը, ուսում հնչ սյտոմ և ինչ ինչ ինչ

Ծեծը չէ նշանակվում III, IV, V, VI հատուածները, որովհետև վերջինս ավելի լրիվ է, ծեծը սկսվում է VII-ի կիսով չափ և ավարտվում VIII-ի կիսով չափ, որովհետև նրանց չորրորդ մասերը միանում են I և II հատվածների չորրորդ մասերի հետ, որ I հատվածի մ. ն. բ. տրամադրվում է ծեծի մասերը մ. ն. բ. տողերի (այսինքն նրանց միանալով նրանց առաջին մասերի հետ) և II-ի գ. ն. գ. տրամադրվում է ծեծի մասերը (գ. ն. գ. տողերը)։ Ծեծի երգեցողության առաջին 3 տողերի տրամադրվում է մյուս տողերը, այսինքն՝ 12 տողը երգվում է մ. ն. գ. տրամադրվում, իսկ վերջին տողը՝ 4 տողը՝ ար. ար. տրամադրվում է նորից։ Ամեն վերջում տրվում է ծեծի ամբողջ տողը, այսինքն՝ ծեծի մեջ ամեն տող երգվում է երկու անգամ։ Ծեծի մեջ ամեն տողի վերջում կրկնվում է նրա վերջին մասը, որ կոչվում է կրկնություն։ Կրկնությունները ծեծի մեջ լինում են երեք տեսակ, որոնք կոչվում են՝ ա) ամբողջական կրկնություն, որ կրկնվում է տողի վերջին մասը, որ կոչվում է կրկնություն, բ) ամբողջական կրկնություն, որ կրկնվում է տողի վերջին մասը, որ կոչվում է կրկնություն, գ) ամբողջական կրկնություն, որ կրկնվում է տողի վերջին մասը, որ կոչվում է կրկնություն։

Ծեծի մեջ կրկնությունները լինում են հետևյալ կերպ՝ ա) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն, բ) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն, գ) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն։

Ծեծի մեջ կրկնությունները լինում են հետևյալ կերպ՝ ա) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն, բ) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն, գ) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն։

Ծեծի մեջ կրկնությունները լինում են հետևյալ կերպ՝ ա) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն, բ) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն, գ) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն։

Ծեծի մեջ կրկնությունները լինում են հետևյալ կերպ՝ ա) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն, բ) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն, գ) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն։

Ծեծի մեջ կրկնությունները լինում են հետևյալ կերպ՝ ա) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն, բ) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն, գ) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն։

Ծեծի մեջ կրկնությունները լինում են հետևյալ կերպ՝ ա) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն, բ) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն, գ) ամբողջական կրկնությունը լինում է տողի վերջին մասի կրկնությունը, որ կոչվում է կրկնություն։

նակներով մերկանայ բանաստեղծութեան և երաժըշտութեան այն եղանակի ներդաշնակութիւնը, այն կանոնն ու օրէնքը, այն միութիւնը բազմութեան մէջ, այն հաշտութիւնը հակառակութիւնների մէջ, ինչպէս ցոյց տուինք վերը։ Մինչեւ նա ներքին ազդմամբ չի դգալ իսկական երգեցողութեան արուեստի գաղտնիքը։ Մի և նոյն ժամանակ կը հետեւանայ թէ ուսուցչի և թէ աշակերտի աշխատութիւնը, որովհետև փոխանակ 32 երաժշտական նախադասութիւնների ի նկատի առնելու, բաւական է նրա չորրորդ մասը, ուր մի անգամից դաղափար կը ստացւի քաղձրաձայնութեան, չափի և կշռի մասին, երգեցողութեան էական օրէնքների մասին։ Ահա այս է համեմատական երգեցողութեան օգուտը, վերլուծութեան արդիւնքը։

Բայց այստեղ վերջանում է մանկավարժի խօսքը։ Գլխաւոր գործը մնում է մեր հմուտ երաժիշտների վրայ։ Նրանք մեր մանուկներին մեծ շնորհ արած կը լինին, եթէ 10 հատ աղգային երգ տան կանոնաւորուած, բոլոր վերլուծութիւններով։ Արևելեան երաժըշտութիւնը յատուկ գաղտնիքներ ունի, որոնք դուրկ են յատուկ գեղեցկութիւնից։ Մանուկը միայն այդ է սիրում. այսօր սովրեցրու նրան մի եւրոպական եղանակ, վաղը նա անզգալի կերպով կը սկսէ կկլացնել ասիացնել, խառնել եւրոպականը իր տարազի հետ։ Բայց եթէ մի հնար գայ հէնց սկզբից ասիականը տալ՝ իր կանոնաւոր օրէնքներով։ Կրկնում ենք բուն գործը ծանրացած է մեր երաժիշտների վրայ։

Ադրիւր 1889 թ. Ս. Մանդինեան

ՂԱՐԻԲԻ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Նոր տարի է...

Ցնծութիւն ձեզ, խինդ ու հրճւանք ձեր սրտերուն, ով երջանիկներ, իսկ ինձ տարաշխարհիկ դարիբիս, մենաւոր տարագրիս, արտասուք ու լաց... Օտար երկիր, դարիբութիւն, դամբարան են ինձ համար...։

—

Նոր տարի է...

Մայր, որ խաղաղութեամբ ու մշիկ-մշիկ,կը հանգչիս Արարատեան դաշտի մէջ, սիրասուն ու վաղամեռ զաւակդ կրծքիդ գրկած, մայր, յիշատակներու և յուզումներու, լացի և արցունքի անսպառ աղբիւր, այս նուիրական րոպէին, կարթննան մէջս քո մայրական կաթոգին և զեղուն սիրոյ անուշիկ զգացումները... Եւ հիմայ, երբ երջանիկները ցնծութեան աւետիսներով նոր տարին կը ծանչնն, մայր, ես երազիս մէջ տեսայ զքեզ. դու կրծքիդ գրկեցիր ինձ, կարօտի և սիրոյ ջերմ համբոյրները դըօշմեցիր ճակտիս և աղու արցունքովդ օծեցիր դէմքս... իսկ ես անուշ-անուշ քո գրովըդ ըմպեցի...։

—

Նոր տարի է...

Փառք քեզ ու քո տարագիր ժողովրդին, փառք քո նահատակներու սուրբ յիշատակին, գուլումի և արիւնի իմ ամայի հայրենիք, արիւնազարդ Հայաստան, քո շառագունած ու կարմիր հորիզոնէն ահա կը ծագի ազատութեան կարմիր արևը և ձիւնածածկ լեռներու գագաթներէն ուրախաձայն կը գոչանջեն զանգակները.

—Դէպի երկիր, դէպի երկիր...։

Հ. Աճեմեան



Սողոմոն Եղիազարեան

Պրօֆեսօրական XXX-ամեայ գործունէութեան առիթով.

Ս. Էջմիածնայ ճեմարանում որբանոց

Մէջ տեղը Հ. Բաբգէն վարդապետը և բանաստեղծ Ծովհաննէս Թումանեան

ՆՈՐԱԳՈՅՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ըստ պատշաճին ընդունեցանք Ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսի նոր տարւայ նուէրը, 2 օրինակ փառակազմ 1916 թ. Օրացոյց Ս. Էջմիածնայ, պճնագարդուած Վեհափառի պատկերով։

ՁԻԹԵՆԻ. գրական փողովածու հայ գրականագէտների յօդուած պատերազմից վնասուածների, 526 մեծադիր երես, գինը 2 ր. ճանապարհածախսով 2 ր. 50 կ. տպագրուած հայ մեկենասների նուիրաբերած գումով։ Եկամուտը նպաստամատոյց ընկերութեան միջոցով յատկացուելու է հայ փախստականներին և նրանց զոհերին։ Փողովածուին մասնակցել են մեր գրական ու գիտնական ընտիր ոյժերն ու հմուտ հրապարակագիրներ։ Ամեն հայի գրադարանի անհրաժեշտ և ժամանակակից գործ է։

ՀԱՏԻԿՆԵՐ ընթերցանութեան ձեռնարկ III և IV տարիների, կազմեցին Կ. Կուսիկեան և Ալ. Մատուեան, 200 երես գինը 80 կ, գրատպիրքը, որ կազմուած է ըստ նամքով, հաւընտիր մի փունջ է մեր ընտիր գրիչների, ամփոփ կրճատուած և ենթարկուած մի քանի անհրաժեշտ փոփոխութիւնների համաձայն մանկավարժական պահանջների։ Միաժամանակ և գիւրըմբռնելի օգտակար կլինի չափահաս հայերի համար, որոնք խորթացել են մայրենի լեզուից և գրականութիւնից։

ՊԱՏՄԱԿԱՆ ԲԱՂԻԱԾՆԵՐ. Ներսէս V Կաթուղիկոս Աշտարակեցի II հ. եր. 1107—1369. կազմեց եղիշէ աւ. ք. Դեղամեանց (արտատպուած Հովիտից) հրատ. Աբշ. Յար. Պարոնեանցի, գինը 50 կոպ.

ՆՈՑՆԸ III մ. (Ննիեւոտդ պրակ) էր 1370—1522 և յատկացած 27 երես բովանդակութիւն նախկին պրակների, հրատ. Պատւական Ծատուրեանի, գինը 50 կոպ.

ՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ. XIX դարում կամ Հայկական հարցի VI-րդ շրջանը գրեց եղիշէ աւ. ք. Դեղամեանց, հրատ. Ս. Տ. Մ.-եանի և Բ. Շ.-եանի, երես 403—485 և յատկացած նախորդ շրջանի ցանկերի 9 երես գինը 40 կոպ.։ Հայր Եղիշէ աւ. ք. Դեղամեանցի այս աշխատութիւնները որ կարևոր փաստաթղթեր են մեր նորագոյն պատմութեան համար, միևնոյն ժամանակ պատ նիւթ են տալիս ընթերցողին խորհրդածութիւնների և եզրակացութիւնների, մեր տհասութեան ու անչափահասութեան։

Положеніе бѣженцев в Александропольском районѣ. *Ա. Յովհաննիսեանի զեկուցումը, որ նստարել է փախստականներին օգնող Բաքւայ կոմիտէում, 1915 թւի հոկտ. 3-ին։ 10 երես գինը 10 կոպ.։ Զեկուցանում են, զեկուցանում դժոխային վիճակը հայ փախստականների. սակայն հայրենիքը սգի մէջ է, որ ըստ արժանոյն մատակարարական գործը չէ համապատասխանում պահանջին։*

ՅՈՅՁԵՐ. Մեսրոպ վ. Մախուրեանցի, ինքնուրոյն և թարգմ. հրատ. Վարդգես Ե. Դեղամեանցի յիշատակ վաղամահ տիկին Վարսենիկ Դեղամեանցի, 88 երես գինը 50 կոպ. 30% յօգուտ հայ գաղթականների։ Գիտնական բանասիրի ազատաչափ քերթուածները ներդաշնակ են իր յոյզերին և մտորումներին որ միշտ քանդ-ամենքան համայիչ են ու սահուն։

ՀՐԱՊԱՐԱԿԱԽՕՍԱԿԱՆ ՄԱՆՐՈՒՆՔ. Եղիշէ աւ. ք. Դեղամեանց, I. գիրք արտատպուած Հովիտից) հրատ. Առսեն Տեր-Ցովհաննիսեանի 166 երես գինը 30-կոպ.։ Հեղինակը իր յառաջաբանի մէջ յայտնում է որ սկսել է գրել 1864 թ. մինչև օրս։ Գրել է միշտ կեղծանուններով, անուան սկզբնատառերով, միայն Հովիտի մէջ է, որ գրում է իր իսկական անունով։

ՁՈՅԳ ԱՁԵՐ. դուէտ երաժշտ. Դ. Ղազարեանի, հրատ. Ս. Միքաէլեանի գինը 30 կոպ.։ Շատ ցանկալի է, որ հայկական ռոմանսներ շարունակ թէ տպագրէին և թէ ընտանիքներում երգուէր։ Ձոյգ-աչերը հաճելի սրտպատուրութիւն է թողնում ունկընդրի վրայ։

ԾՈՑԻ ՕՐԱՑՈՅՑ 1916 թ. 29 րդ տարի. աշխատ. Մակար Զրմեկեան 192 երես։ Յատկացած մէջ մանում են աստղագիտական տոմարական, վաճառականական բժշկական և այլն տեղեկութիւնները, օրացոյցական տեղեկատու չատ ընդարձակ, երազահան և այլ մանրուք, գինը 20 կոպ.

ԾՈՑԻ և ՍԵՂԱՆԻ և ռուսերէն Армянскіи Календарь с предсказаниями *օրացոյցները միասին 80 կ. Սրանք էլ ունին շատ յատկացածներ, իսկ Սեղանինը պատկերազարդ է։*

ԴԻՒԱՆ ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ.—Գիրք ԺԴ. Հարստահարութիւններ Տաճկահայաստանում, վաւերագրեր 1801—78 թ. Ազգային Բիւրոյի ծախքով, հ. Գիւտ ա. ք. Աղանեանցի հրատարակած 612 մեծադիր էջերից բաղկացած և սիրուն տպագրութեամբ այս հատորը, իր նախորդ հատորներից ամենքից արժէքաւոր և շահեկանն է և «մի առանձնայատուկ տեղ գրաւում» իր նախորդ հատորների մէջ որոնք հայու խաղաղ քաղաքակրթութեան նկարագրի և երբեմն ալ մրրկոտ կեանքի դառնութիւններն են պատմում։

«Այս հատորը ողբում է Հայաստանի աւերակների վրայ, տաճկական Հայաստանի Հայ ժողովրդի ֆիզիքական, անտեսական, ընտանեկան և բարոյական աւերածութեան վրայ» առում է հայր Աղանեանը «Դիւանի» յառաջարանի մէջ։ 1896—1898 թուականներին Արիմեան Հայրիկի յանձնարարականով հ. Աղանեանը ուղարկւում է կ. Պոլիս, այնտեղից ուղևորւելով Տրապիզոն և Տաճկահայաստանի ուրիշ կենտրոններ, հաւաքում է մի քանի հազար կարևոր նամակներ և գրւածքներ, որոնց մէջն են նաև Պիւտանում հրատարակած բոլոր նամակներն ու գրւածքները։ «Երբ ես ծանօթացայ այս գրւածքների բովանդակութեանը՝ այլևս երբէք առանց արտասուքի չը կարողացայ կարդալ այդ ամէնը, այնքան սոսկալի էին և քստմնելի դրանք» առում է հ. Աղանեանը։ Դիւանի այս հատորը այլ բան է ասում։ «Սիստեմատիք սպանութիւն ու թալան խմբական բռնի կրօնափոխութիւն, իրաւազրկութիւն, լկանք, առևանգում ու բռնաբարում հրէշային չափերով, առասպելական չափով և անարդար հարկահանութիւն սրբապղծ.ամենազազիր տեսակներ, հարստահարութիւն, պաղանութիւններ ու ամէն տեսակ անլուր բարբարոսութիւն»։ Ահա այն ամէնքը ինչ որ 171 վաւերագիր նամակներով նկարագրւած են «Դիւանի» մէջ։ Հատորի վերջը կայ բառ գրքոյկ և ծանօթութիւններ։ «Դիւան»-ի այս չափազանց արժէքաւոր ու հետաքրքրական հատորը կ'արժէ որ ամէն գիտակից հայր գնէ աւելի մտիկ ծանօթանալու համար Զուլումի երկրի, Տաճկահայաստանի անցեալի դրութեանը հետ։

Армяно-Григоріанскій Календарь на 1916 г. *8-րդ տարի. կազմեց Ս. ք. Տէր-Յովհաննիսեանց, զարդարւած պատշաճ շատ պատկերներով, 207 եր., գինը 30 կ.։ Նախկին տարիներից աւելի ճոխացրած և ընդարձակ է այս տարւայ հրատարակութիւնը։*

ՏԵՂԵԿԱԳԻՐ Ալէքսանդր. նեղ. Օգնութեան Ազգ. Յանձն. Գործունէութեան 1914 թ. նոյեմբերի 1-ից—1915 թ. մայիս. Отчет. Стазроп. Армян. Комитета по сбору денег но добровольцев с 10-го ноября 1914 г. по 15-то іюля 1915 г.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԲԱԳԻՈՑ ՀԱՅ ԳՐԱՍԵՐՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ. որի նպատակն է Հայ գրականութեան, գրողների մըտաւոր, բարոյական և նիւթական բարւոքմանը նպաստելու։

ՀԱՅՈՑ ԳԵՏԵՐԸ. Հայոց 69 գետերը խաղաթղթերով, բացատրական գրքոյկով ու հայոց գետերի քարտէզով, հրատ. Մանուկ ընկ. № 1, խաղի յատկւած առանց գրքոյկ. 71 եր. գինը 1 ր. 50 կ.։ Ընտիր, ընծայ հայ երեխաների համար, որ կազմիլ են բանաստեղծ Յովհ. Թումանեանի զաւակները։

ԹԱՆԳԱԳԻՆ ՔԱՐԵՐ, քարերի խաչ, բացատրական գրքոյկով, հրատ. Մանուկ Ընկ, № 2. գինը 50 կոպէկ։

ՍՐԱՄԻՏ ՆԱԽՐԱՊԱՆԸ, տառերի խաղ. հրատ .Մանուկ. Ընկ. № 3, գինը 40 կ.

ԴԸԴՈՒՄ, գոյների խաղ, հրատ. Մանուկ. Ընկ. № 4· գինը 40 կ.։ Բոլոր այս հրատարակութիւններն էլ արժանի են գովեստի և հայ մանկանոցի անհրաժեշտ ձեռնարկներ են։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐՏԻԶԸ, մեծադիր, գունատիպ, կազմեց Ար. տաշես Աբեղեան, գինը 1 ր. 20 կ., Ցանկանանք որ կազմողի հետեւեալ քարտէզը լինի իմիճնավար Հայաստանը։

ԼՕՏՕ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՌԱԾՆԵՐԻ, հրատ Մանուկ ընկ. *№ 8, Առածներն առնւած են հէքիաթներից, հին զրոյցներից։ Ունի խաղի բացատրութիւն գինը 1 ր.։*

„Кавказское Слово“

Адресъ редакціи и конторы: Тифлисъ, Барятинская, 6.

Подписная цѣна на газету: для гор. подписчиковъ для иногородныхъ

на 1 годъ . . . . 8 р.— к. . . . 9 р. 50 к.
на 6 мѣс. . . . . 5 „— „ . . . 5 „ 50 „

Допускается разсрочка подписной платы лишь для годовыхъ подписчиковъ, при условіи непосредственнаго обращенія въ контору газеты.

Пользующіеся разсрочкой уплачиваютъ: городскіе подписчики—при подпискѣ 3 р., къ 1 марта—3 р. и къ 1 маю—2 р.; иногородніе—при подпискѣ—4 р. 50 коп., къ 1 марта—3 р. и 1 мая—2 р.

Сельскимъ учителямъ, сельскимъ священникамъ, рабочимъ, мастеровымъ и фельдшерамъ предоставляется скидка въ 10% съ подписной платы.

Книжнымъ магазинамъ и кіоскамъ, принимающимъ подписку—5% скидки.

Редакторъ: Ю. Ф. Семеновъ

Издатель: Тифлисское Т-во Печатнаго дѣло.

„ՀԱՄԲԱՒԱԲԵՐ“

Հասարակական-գրական շաբաթաթերթ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Հետեւեալ ծրագրով. *1. Պաշտօնական տեղեկութիւններ, Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան կենտրոնական Վարչութեան ու ճիւղերի հաշիւները. 2. Հետաքրքիր, նորերն և արտաքին տեսութիւններ, հասարակական, կուլտուրական և գիտական բովանդակութեան յօդուածներ, գրական նորութիւնները, պատմական տեսութիւնները, վիպակներ, պատմուածքներ, ոտանաւորներ, քննադատութիւն. 3. Քրոնիկոն, տեղեկութիւններ, խղճակցութիւններ, կենսագրութիւն, մատենախօսութիւն. 4. Արուեստ, թատրոն, երաժշտութիւն. 5. Փոստարկղ, յայտարարութիւն:*

Թերթը բաղկացած կլինի 16 մեծադիր երեսներից և լոյս կը տեսնէ կիրակի օրերը: Կաշխատակցեն հայ գրականութեան և մամուլի մէջ յայտնի անձեր:

Բաժանորդագինն է տարեկան 4 ր., կէս տարուան 2 ր. 50 կ. Բարեգ. Ընկ. անդամների, հայ դպրոցների, ուսուցիչների, հայ հասա, րակական հիմնարկութիւնների համար՝ տարեկան 3 ր., կէս տարուան 2 ր.: Արտասահման 5 ր., 6 ամսուան 3 ր.:

Բաժանորդագրութիւն ընդունւում է խմբագրատանը, Թիֆլիս, Աբաս-Աբադեան հրապարակ, № 7 և Ընկերութեան գաւառական ճիւղերի վարչութիւններում:

Օտար քաղաքներից դիմում են՝ Тифлис, Редакція „АМБАВАБЕР“. *Արտասահմանից՝* Tiflis, Rédaction du journal «HAMBAVABER»

Խմբագիր՝ **Սամսոն Յարութիւնեան**

Հրատարակիչ՝ **Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութիւն**

1843 „ԲԱԶՄԱՎԷՊ“ 1916

Հասցէն՝ Rédaction de la revue „PAZMAVEB„

S. Lazare — Venise (Italie)

ՄՇԱԿ

45-րդ տարի

Քաղաքական եւ Գրական Օրաթերթ

Բաժ. 10 ր. հասցէն, Редакція «Мшак» Тифлис. *արտասահմանից* Tiflis rédaction «Mschak»

ՀՈՐԻԶՈՆ

VIII *տարի*

Հասարակական, գրական եւ քաղաքական օրաթերթ

Բաժ. 10 րուբ. արտասահման 12 րուբլի

Հասցէն՝ Редакція „Оризон“ Тифлисъ. *արտասահմանից* redaction «Horizon» Tiflis (Caucase—russie)

ԳԻՒՂԱՏՆՏԵՍ

Շաբաթաթերթ

Թիֆլիս, բաժ. տարեկ. 3 ր. արտասահմ. 4 ր.

Тифлисъ, Редакція «Гюхатнтес»

ՀՈՎԻՏ

XI *տարի*

Ազգային հասարակական եւ գրական շաբաթաթերթ

Բաժ. 4 րուբ. կամ 12 ֆրանկ

Հասցէն՝ Ред. „Овит“ Тифлис. *Արտասահմանից,* rédaction «Hovit» Tiflis (Caucase—russie)

ԿՈՉՆԱԿ

XVI-*տարի*

Շաբաթաթերթ

The «Gotchnag» 115 E. 24 th. St. New-Work

Անգլիերէն, Իտալերէն, Ֆրանսերէն, Ռուսերէն, եւ Հայերէն

լեզուների դասատուներ, դաշնակի վրայ հմուտ ուսուցչանոցն ևս առաջարկում է

Գրական-գեղագիտական Սալօնը

Голов. пр. 41. 0—2

ԽԱԹԱԲԱԼԱ

XI-*րդ տարի*

Շաբաթական երկիծաթերթ

Բաժ. 5 րուբ. հասցէն Тифлисъ. Редакція „Хатабала“ *Արտասահմանի համար* Tiflis (Cau case) redaction „Khtabala“

ԳԵՂԱՐՈՒԵՍՏ

Գրական-գեղարուեստ.-երաժշտական հանդէս

Խմբագրութեամբ Գաբրիէլ Լևոնեանի. Բաժանորդագինն է 10 գրքին 10 ր. իւրաքանչիւր գիրքը առանձին 2 րուբլի

Լոյս են տեսել Ա. Բ. և Գ. գրքերը, խմբագրւում է Դ. գիրքը:

Тифлисъ, Редакція «Гехарвест» почт. ящ. № 133.

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Եռամսեայ պատկերազարդ

Թիֆլիս, (Հայոց Ազգապրական Ընկերութեան)

Բաժան. տար 5 ր., արտասահմանում 13 ֆրանկ:

Тифлисъ, „Азгагракан Андес“

ՄՇԱԿ

IV-*րդ տարի*

Երկշաբաթաթերթ

Բաժ. 4 րուբ. հասցէն Москва Ред. „Мартъ“ *Արտասահմանից՝* redaction de la revue «Mart» Moscou

ՕՐԱՏՈՒ

I-*տարի*

Հասարակական-Քաղաքական եւ Գրական Շաբաթաթերթ

Բաժ. 3 րուբ. հասցէն Редакція «Пейкар» Большая-Ванская 3 Тифлисъ

ԲԱՑԻՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1-ԻՆ ՏԱՐԻ

„ՎԱՆ-ՏՈՍՊ“

1-ԻՆ ՏԱՐԻ

Հասարակական, քաղաքական, գրական շաբաթաթերթ

ԲԱԺԱՆԵՑԻՆ Է ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Տարեկան 4 ր.	*Կէս տարուան 2 ր. 50 կ.*	*Ամսական 40 կ.*	*Հատ 10 կ.*

Արտասահմանում՝ տարեկան 15 ֆր. վեցամսեան՝ 8 ֆր.:

«ՎԱՆ ՏՈՍՊ»-ին վերաբերեալ նամակները, հետաքրքրները և ընդհամր պէտք է ուղարկել միմիայն խմբագրութեան հասցէով: «ՎԱՆ ՏՈՍՊ» շաբաթաթերթը ունի իւր յատուկ խմբագրական կազմը և որևէ առնչութիւն չունի «ԱՂԲԻՒՐ»-ի և «ՏԱՐԱԶ»-ի խմբագրութեան հետ:

«ՎԱՆ ՏՈՍՊ»-ի հասցէն՝ Тифлисъ, Головинскій пр. № 41, арм. журнала „ВАН ТОСП“ *արտասահմանից՝* Redaction du journal Armenien «VAN-TOSP» Russie. Tiflis Golovinski pr. № 41.

Յօգուտ պատերազմից ձգատ. առանձնապէս փափաստ. և որբերի

„ՋՈՒՅՑ“

Գրական ժողովածուն

փառակազմ արժէ 10 ր., սովորական կազմով 3 ր.. իսկ անկազմ 2 ր. 30 կ.: Ձանապարհածախքը նպաստամատոյց Ընկերութեան վրայ:

Դիմել Тифлисъ, Обществу Вспомоществованія „Нпастаматуйц“

Լոյս տեսաւ ՄԱԿԱՐ ՉՄՇԿԵԱՆԻ

1916 թ. ՕՐԱՑՈՅՑՆԵՐ

Ծոցին 20 կ. Սեղանին 30 կ.

Ծախւում են Կովկասի քաղաքների բոլոր գրախանութներում:

Հասցէն՝ Тфлисъ, Макаръ Чмшкян.

Дозволено Воен. Цензурою

Թիֆլիս, Տպարան Ն. Ադանեան Գօլից. 7